Արձանագրություն N2

«ՀՀ ԱԺ ԷԱԱՊՁԲ-18/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքների ամփոփման նիստի

ք. Երևան

3 սեպտեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Մարգարյան, Վ. Քեռյան, Մ. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1. Աճուրդի մասնակիցների կողմից ներկայացվող հայտերի վերաբերյալ

«ՀՀ ԱԺ ԷԱԱՊՁԲ-18/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել 31.08.2018թ. ժամը 11:00-ին:

2. էլեկտրոնային աճուրդը սկսելու վերաբերյալ

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտը ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ ս. թ. սեպտեմբերի 3-ին ժամը 11:00-ին:

3. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը) և էլեկտրոնային հասցեն

Հ/հ	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե
1	«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ReForceGroupllc@gmail.com

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Մասնակիցներ	Չափաբաժին 1						Նախահաշվային գներ
	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			
	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	
«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	611000	0	611000	611000	0	611000	612000

Աճուրդի ամփոփման արդյունքում «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտարարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

5. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացրած հայտի հավելված N 1 դիմում-հայտարարությունը՝ պարզեց, որ այն չի

ներկայացվել հրավերով սահմանված կարգով, քանի որ դրանում բացակայում է 4-րդ կետը, ուստի ղեկավարվելով Ընթացակարգի Հրավերի 7.9 կետի 2-րդ ենթակետով որոշեց՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ մինչև 05.09.2018թ. ժամը 11:00-ն՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. 05.09.2018թ. ժամը 11:00-ին «ՀՀ ԱԺ ԷԱԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը վերսկսելու վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմի սահմանված ժամկետում շտկվել է առկա անհամապատասխանությունը, ուստի Հանձնաժողովը որոշեց «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետով համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

8. ՀՀ ԿԱ պետական եկամուտներ հարցում ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 12.09.2018թ. ժամը 11:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Մարգարյան

_____ Վ. Քեռյան

Մ. Վարդանյան

Քարտուղար՝ Ա. Գրիգորյան